Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մարտի 25-ի N 308 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՈՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԷՆԵՐԳԱԲԼՈԿԻ (ԷՆԵՐԳԱԲԼՈԿՆԵՐԻ) ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ

1. «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրերի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնում» ծրագրի նկարագրությունը և նպատակը

Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման կառավարող ընկերության համար հայտարարված մրցույթում հաղթող է ճանաչվել «Ուորլիպարսոնս» ընկերությունը, որի հետ «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2009 թվականի մայիսի 29-ին ստորագրել է համապատասխան ծառայություններ մատուցելու մասին պայմանագիր: Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2009 թվականի մայիսի 29-ին N 22 նիստի արձանագրային որոշման 40-րդ կետով հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրերի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնման N ԾՁԲ-09/22 պայմանագրին: Պայմանագրի առաջին և երկրորդ փուլերի աշխատանքների արժեքը կազմում է 500,0 հազ. ԱՄՆ-ի դոլար: Նշված պայմանագրով 2009 թվականի համար նախատեսված աշխատանքների արժեքը կազմում է 404,0 հազ. ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ: Այդ աշխատանքները կատարելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2009 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի եկա-

մուտների և ծախսերի գումարներն ավելացնելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ու Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանը գումար հատկացնելու մասին» N 789-Ն որոշմամբ հատկացրել է համապատասխան գումար: Համաձայն պայմանագրի՝ կառավարող ընկերությունն աշխատանքի առաջին փուլում կմշակի «Բանկի համար ընդունելի տեխնիկատնտեսական հիմնավորում» փաստաթուղթը, իսկ երկրորդ փուլում՝ «Ռազմավարական ներդրողների ընտրություն» մրցութային փաթեթը: Աշխատանքի առաջին և երկրորդ փուլերի տևողությունը 12 ամիս է:

2. «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրերի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնում» ծրագրից ակնկալվող արդյունքները

Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում կմաշակվեն «Բանկի համար ընդունելի տեխնիկատնտեսական հիմնավորում» փաստաթուղթը և «Ռազմավարական ներդրողների ընտրություն» մրցութային փաթեթը: Այդ փաստաթղթերի հիման վրա Հայաստանի Հանրապետությունը կարող է հայտարարել Հայաստանի Հանրապետությանում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) կառուցման համար ռազմավարական ներդրողների ընտրության մրցույթ:

3. 2009 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնում» ծրագրի կատարման մասին

«Ուորլիպարսոնս» կառավարող ընկերությունը 2009 թվականին մշակել է «Բանկի համար ընդունելի տեխնիկատնտեսական հիմնավորում» փաստաթղթի առանձին բաժիններ:

Հիմք ընդունելով «Ուորլիպարսոնս» կառավարող ընկերության կողմից կատարված վերլուծության արդյունքները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2009 թվա-

կանի դեկտեմբերի 3-ի N 1458-Ն որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում կառուցվող նոր միջուկային էներգաբլոկի ռեակտորային կղզյակը Ռուսաստանի Դաշնության ջրաջրային էներգետիկական (ԱԷԿ-92) ռեակտորային տեղակայանքով կահավորելուն: Ռեակտորային այդ տեղակայանքի հզորությունը 1060 ՄՎտ է, շահագործման ժամկետը՝ 60 տարի, և այն ստացել է անվտանգության եվրոպական սերտիֆիկատ:

4. «Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնում» ծրագրի ֆինանսական ապահովումը

NN ը/կ	Բնագավառը	Աշխատանքի սկիզբը	Աշխատանքի անվանումը	2010 թ. ֆինանսավորումը (հազ. դրամ)
1.	Միջուկային էներգետիկա	01.01.2010 թ.	Հայաստանի Հանրապետությունում նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնում	35923,2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ